թիւնը շատ յառաջացած են, որոնց համար աշակերտներն առանձին պարգևներ են ստանում։

ՃԷՄ. Ե. ԴԱՍ. ԱՂ. Ա. Զ.

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Յունիսի 22ին մեծ հանդէսով տօնվեցաւ Ս. Էջմիածնում Կաթուղիկէ Ս. Էջմիածնի տօնը։ Սովորական մաղթանքից յետոյ Միաբանութիւնը ներկայացաւ Վեհափառ Հայրապետին և ընդունեց Նորին Վեհափառութեան օրհնութիւնը։ Ս. Էջմիածնի Վեհափառ Գահակալը այս խօսքեր բարեհաճեց ուղղել Միաբանութեանը. «Հրաշափառ է տօնս։ վասն զի այս տօնը կպատկանի ամեն Հային ուր ուրեք կայ։ Ուրեմն հայկական է տօնս և ամեն Հայն կտօնէ այս տօնը մեծ հանդէսով։ Իսկ դուք ամենքից աւելի տօնեցէք և ցնծացէք։ Սա ձեր իրաւունք է։ վասն զի սուրբ Գրիգորի մեծ տաճարի պաշտօնեաներ էք։ Բայց այս իրաւունքի հետ ունիք և պարտքերն։ որոնք նոյնպէս ամեն Հայերի ունեցած պարտքերից աւելի են։ Ուրեմն իւրաքանչիւրն ըստ իւր աստիճանի թող հոգով և ճշմարտութեամբ ծառայէ Մայր Աթոռին թէ բարոյապէս և թէ նիւթապէս աւելի քան թէ իւր ծանօթներին։ իւր ազգականներին։ իւր անձին։ որպէս զի պարտքերիդ հետ կապված լինին իրաւունքներդ։ Այս սուրբ տեղում իջնալ Միածինը պարգևէ ձեզ ամենայն շնորհներ խաղաղութեամբ և աշխատասիրութեամբ կենցաղավարելու։ ամէն»։

Յետոյ ճեմարանի աշակերտներ ներկայացան և ճառ մատուցին։

***

Ահա այն ճառը որ կարդաց Ս. Կաթուղիկէ Էջմիածնի տօնի օրը Ե. դասարանի ընտիր աշակերտներից մին—Յակոբ Պէքարեան։

ՎԵՀԱՓԱՌ ՏԻՐ։

Բարէ։ որքան քաղցր է արդեօք հոգևոր որդուոցս Վեհափառութեանդ յօրինել բանս գովութեան և երախտագիտութեան և հոչակ ընդ ամենայն կողմանս հարկանել զազգասէր գործոց Հօրդ հասարակաց։ Զի ահա բազումք հոլովեցան դարք։ յորմէ հետէ զիւր հաստատութիւն կալաւ Մայրս մեր եկեղեցի։ որ եղև Աթոռ Հայրապետական ամենայն աղգիս և որում բազումք եղեն ժառանգողք և բազում վարողք իշխանութեանդ։ առ որովք է զի փառք տանս թուէր ցանկալի աղգաց համայնից բնակելոց շուրջ զմեզ։ է զի փառք տանս զամանս ի նախանձ գրգռէր և ոմանց ուրախութիւն և ցնծութիւն առնէր։ և է զի Պարթևն այն մեծ, զԱահակ ասեմ, ոչ ակնկալալ ընդ Մեսրոպայ առնէր զԱա աղբիւր լուսոյ ճշմարտութեան կրօնիս և աղբիւր ամենայն կենցաղօգուտ գիտութեանց։ յորս ոչ միայն վայելէին որդիք Թորգոմեան ազգինս։ այլև ազգք մերձաւորք հիւսիսականք։ եղև դարեալ։ զի թափուր գտաւ Մայրս Ս. եկեղեցի անշքացեալ ի նախ-

կին փառացն՝ որպէս հարսն զրկեալ ի փեսայէ՝ կանգուն եկաց Նա ի կոյսս աւերակաց՝ և ետես արտասուք յաչս գյափշտակումն որդւոց իւրոց ի գրկաց՝ ոչ ևս հնչէին երգք օրհնութեանց ի նմա՝ լռեալ կային ամենայն մատեանք սատուածայինք՝ Եւ այսպէս փոխանակեցին միմեանց աւուրք փառաց և անշքութեան՝

Վեհափառ Տէր՝ որ զՀայրդ մեզ պարգևեաց Աստուած լինել զլուսաբանաւոր հօտիդ՝ հրճուիմք առհասարակ ընդ գործս հրաշալիս Վեհութեանդ՝ այնու զի զհետ նկրտեալ լուսաւորութեան դարուս գուն գործեցեր առ ի կանգնել զնախկին պայծառութիւն և զբարեվայելչութիւն Մօր մերոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի՝ զորոյ կատարեմք ի սերկեան աւուրս զհրաշափառ տօնախմբութիւն՝ և ի կենդանի ունել զսէր Էջմիածնի ի սիրտս ամենայն Հայորերոյ՝ որք զարդիս գիտակ եղեալ բաղձանաց Հօրդ մերոյ՝ այն է առնել զՏաճարս զայս շտեմարան մտաւորական և բարոյական լուսաւորութեան՝ ակնկալելոյց հային ի Սա և հայցեն ի Սմանէ զջամբումն կամին իմաստից և ճշմարտութեան՝

Արդ՝ ով ընկերք սիրելիք՝ սանուանք բարերարեալք՝ որք հանապազ վայելէք ի դաստակերտիդ իմաստութեան զշնորհս ազգասէր Հայրապետիս մերոյ՝ այսօր ի մեծաշուք հանդիսի տօնիս Սրբոյ Էջմիածնի օրհնեցէք զբարեխնամ Հայրն մեր և խնդրեցէք ի Տեառնէ զի երկարեսցէ զթել կենաց Դորա յամս յամսոյր ի պայծառութիւն Ս. եկեղեցւոյս և ի ցնծութիւն Հայ մանկաւոյս՝ որպէս զի ընդ հովանաւորութեամբ մեծազօր Աջոյն և ի ձեռն ս. աղօթիցն լիցուք արժանի կոչմանս մերում՝

***

Յունիսի 26ին Վեհափառ Հայրապետը Եպիսկոպոսական բարձր աստիճանին արժանացրեց գեր. Համբարձում Վ. Դիմաքսեան՝ Երզնկայի առաջնորդը և գեր. Ղևոնդ Վ. Շիշմանեան Պիլէճիկի առաջնորդը՝ որոնք եկած էին Թիւրքիայից՝ Երկոքեանն ևս ընտիրանձներ և բարեմասնութիւններով և օգտաւէտ գործունէութեամբ աշխատաւոր հոգևորականներ են՝

Արարատը՝ կշնորհաւորէ նորապսակ գերապատիւ Եպիսկոպոսներին իւրեանց սրբազան աստիճանը և ամենայն սրտեռանդ բարեմաղթութիւններ կնուիրէ նոցա՝ ցանկալով ժողովրդին քաջարթուն հովիւ՝ Աստուծու տան իմաստուն տնտես և կեանքի բանի ուղիղ վարդապետ լինել երէկ և այսօր՝ նոյն և միշտ այսուհետև՝

Յուլիսի 1ին նորապսակ Եպիսկոպոսներն մեկնվեցան Ս. Էջմիածնից դէպի իւրեանց վիճակներ՝

***

Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց հետևեալ կոնդակներ շնորհել մինչև յուլիսի 1ը՝

Կոնդակ Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան Կ. պօլսի Նախկին պատրիարքի անունով՝ որով կյայտնէ թէ նորա և միւս վանահայրերի խնդրանքի համաձայն արած է կարևոր կարգադրութիւն և տնօրէնութիւն Լիմ-

Կտուց անապատների և Վարագայ վանքի Թիֆլիսում ունեցած կալուածների և նոցա համար ուղարկված Վարդապետներին օգնելու համար, և թէ վեց հարիւր հինգ մանէթ Աստրախանի վիճակում Վանի և Աղաշկերտի սովեալների համար ժողովված գումարից յանձնված է տեղական յանձնաժողովի ատենադպրին Վան ըստ պատկանելուն հասցնելու համար։ 1880, յունիսի 2, № 263։

Կոնդակ Երեմիա Եպիսկոպոսին, Վասպուրականի վիճակի պատրիարքական փոխանորդին 605 մ. ուղարկելու մասին յօգուտ սովեալների։ 1880, յունիսի 2, № 264։

Կոնդակ յանուն և ի պատասխանի գրութեան Մկրտիչ էֆէնտիի Աղաթոնեան նահանգապետի խորհրդականին, Վանի և Աղաշկերտի սովեալների համար կարգադրութիւն անելու և 605 մ. ուղարկելու մասին։ Յունիսի 2, № 268։

Կոնդակ Պօղոս Վարդ. Խոլտամեանի Կ. պօլսի պատրիարքական փոխանորդի անունով, որով կշնորհէ նորան լանջական ականակուռ խաչանշան ժրաջան գործունէութեան և. համար։ Յունիսի 11, № 282։

Կոնդակ Աշտարակի նորընտիր հոգաբարձուներին, որով կհաստատէ գպրոցի հոգաբարձական պաշտօնում Գաբր. Շահնազարեանին, Փիլիպ. Շահազիզեանին և Գէորգ Ղափանցեանին։ Յունիսի 11, № 284։

Կոնդակ Արդիկ գիւղի նորընտիր հոգաբարձուներին, որով կհաստատէ գպրոցի հոգաբարձական պաշտօնում Յով. քահ. Տէր Նահապետեանին, Պօղոս Մանուէլեանին, Ազարիա Յակոբեանին և Մատթէոս Պապոյեանին։ Յունիսի 11, № 285։

Մեծ Կոնդակ օրհնութեան և ի պատասխանի հանրագրութեան Երզնկայ քաղաքի և վիճակի Երեսփոխանական, Կրօնական և Քաղաքական ժողովների և Թաղական խորհուրդների անդամներին, որով կօրհնէ նոցա և նոցա ջանքերը իւրեանց եկեղեցիների և դպրոցների պայծառութեան համար և իւրեան առաջնորդ Հմայեակ Վ. Դիմաքսեանին Եպիսկոպոսութեան աստիճան վերածելու մասին։ Յունիսի 27, № 306։

Մեծ Կոնդակ օրհնութեան և ի պատասխանի հանրագրութեան Պիլէճիկի և վիճակի Երեսփոխանական, Կրօնական և Քաղաքական ժողովների և Թաղական խորհուրդների անդամներին, որով կօրհնէ նոցա և կխրախուսէ աշխատել իւրեանց առաջնորդի հետ դպրոցները բանալու իւրեանց մանուկների լուսաւորութեան համար և իւրեանց առաջնորդ Ղևոնդ Վ. Շիշմանեանին Եպիսկոպոսութեան աստիճան վերածելու մասին։ Յունիսի 28, № 307։

Կոնդակ յանուն և ի պատասխանի վկայականների և գրութեան Ներսէս Արքեպիսկոպոս Կ. պօլսի Պատրիարքին վերոյիշված երկու վարդապետներին Եպիսկոպոսական աստիճան վերածելու մասին։ Յունիսի 28, № 310։